Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909. Շաբաթ, Յոկտեմբերի 24-ին. Թիֆլիս. №43.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՐՈՒԹԻՒՆ




Худож.-Лит. С. Обилова, Тифлисъ



*Անձնասպան եղաւ «Հորիզոնի» խմբագրատան 17 սեպտեմբերի 1909 թ.ի։*

**ԿԵԱՆՔԻ ՊԱՏԿԵՐԸ**




**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՈՒՌԿԱՆՈՒՄ**

ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1909 թ.

Տարի 4 ԽԱԹԱԲԱԼԱ 4 Տարի

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան բոլոր հայ և օտարազգի գործիչների, որոնք արժանի են ծաղրանկարւելու, քննադատւելու, ծաղրի և ծիծաղի։

«Խաթաբալայի» բաժանորդները, այլև երդւեալ ընթերցողները

ԱԶԱՏՈՒԱԾ ԵՆ

ամեն տեսակ պատուհասներից և խայտառակութիւններից

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, եւ գտնւում է Սերգէեւսկայեա փ. № 1

տուն եղբ. Միրզայեանների վերի յարկում.

Յայտարարութիւններ ամեն լեզուներով և խիստ մատչելի գներով։

Մեր ընթերցողներին մաս ենք ածում սեփական աէրօպլաններով։

Բազմաշխատ գործակալներին և «Խաթաբալայի» պրոպագանդիստ տարածողներին «Խաթաբալան» ուղարկւում ենք ձրի։

Խմբագրին կարող է տեսնել ով որ աչք ունի և քոռ չէ՝ ամեն բնած ժամանակ, խմբագրատանը անժամանակ և փողոցներում բոլոր ժամանակ։ Առանձին ընդունելութիւններ չի ունենում, իսկ գողանի խոսք ունեցողներից խուսափում է։ Նիւթեր, յօդուածներ, ոտանաւորներ, յայտարարութիւններ և այլն մենք էլ ենք ընդունում, փոստն էլ, միայն ճանապարհածախսը ձերն է, առանց մարկայի նամակներ „սկզբունքով" չենք ընդունում։ Յօդուածների համար վճարում ենք, եթէ արժան ենք համարում. իսկ անարժանների համար փող էլ որ տան, չենք տպել։





ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

| | | |
|---|---|---|
| Տարեկան Թիֆլիզում | 4 ր. | դուրսը 5 ր. |
| Կէս տարւանը | 2 ր. | 3 ր. |
| Երեք ամսւանը | 1 ր. 50 կ. | |
| Ամիսը | 50 կ. | |

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала".

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Re'daction „Khathabala".

Խմբ. հրատարակող՝ ԱՍՏ. ԾԻՐԻՑԵԱՆ


Հոկտեմբերի 1-ից մինչև տարւայ վերջը «Խաթաբալան» արժէ 1 րուբլի 50 կոպէկ։

Ա Զ Դ

Մեր գաւառական բաժանորդներից շատերը ուղարկել են մեզ 4-ական րուբլի բաժանորդագին, փոխանակ 5 րուբլու։

Ներկայիս կրկին խնդրում ենք նրանցից, որոնք մնացած 1-ական րուբլին դեռես չեն հասցրել՝ ուղարկեն այժմ դրամով կամ պօստային մարկաներով—որպէսզի առաջիկայ նոյեմբերից թերթի առաքումը չը դադարեցնենք։

## ԷՋՄԻԱԾԻՆ

V

Էջմիածնի լաւը էն է, վուր սուսայի էտ բաներեմէն, ուրիշ բանիր էլ շատ ունէ. Էջմիածինը թւանքչիք էլ ունէ. համա ինչ բան է թւանքչի. Թւանքչին էն թուուր մէ բան է, վունց վուր միր թաքաւուրութինն էլ ունէ՝ չափարնեբու գլուխը—մէ քիչ սօտնիկից պուճուր ու մէ քիչ էլ ուրեդնիկից բանցըր։ Միր տէրութենից ու Էջմիածնից սուսայի, միր գազէթաչիներն էլ ունին թւանքչիներու հանգի զուլուղչիք,սրանք գազէթաչիներու տակի մասխարէքն ին, իփ վուր Նրնդրութին է Օնանովի, ան Վանքի չկօլի, իփ վուր Բարեգուրծական, ան վախտով Հրատարակչականի ժողովիրն էլ կայ ու կէր,էն չախը էս գազէթաչիներու տակի մասխարա թւանքչիքը, հէնց էին ասկիհամա չալիշ գալի, իրենց մարթկանց նրնդրելու համա, վունց վուր պօլիցի ուրեդնիկը մաթբախով խարջ ու բէզեար հաւաքելիս, ու վունց վուր Էջմիածնի թւանքչիքն էլ, աղաքը տէրտէր, ան վարթապիտ գցած սինօդ տանելիս.

Ուրեդնիկը, թւանքչին ու գազէթաչու տակի մասխարէն՝ մէ դալիբի փէշաքարնիր ին։

Կաթղիկոսի մօդ մէ դիւանատուն կայ. էս դիւանը խանդիսխան անդիւան ուփրօ շատ է գուրձ անում, քան Դիւանով։

Լուսահոքի Հայրիկի ժուդը, դիւանը վունց վուր Սուօլիպինի կանցելարիէն ու դիւանապետն էլ, վունց վուր նեմեցներու աշխրքումը մէ վուխտ վուր կէր՝ Բիսմարկը. Թափաւութը մենակ նրա մէչն է, վուր Բիսմարկի գլխումը խիլք, նամուս ու արուռ կար, համա Էջմիածնի դիւանատան դիւանապետի գըլխումը կի, դրանց հակառակ բանիր։

Մէ վուխտ էլ կէր վուր դիւանապետը ուփրօ զօրութին ունէր, քանց թէ կաթղիկուսը. ու իրեք գրւանքայ խիգիլալով խնդի տիղ, կէս փութ դօշով՝ կնդրուկի մագիէր, հինգ վեդրա կախէթով, կանթէղի ձէթի տիղ ու՝ մէ կատինկէի ասիգնացին էլ՝ արքաւթէնի ճամփու գանիրը բացւում էր ու ով գուզէր ուխտին տէրտէր կօխնիլ կու տար, ով գուզէր գուղին՝ խաչ ու կամիլավկով կու շնորկէր։

Աշխրքիս վրէն մենակ Օսմանլի երգրում, էն էլ Աբդուլ-Համիդի օրօքը, կուլէր. վուր գուղն ու աւազակը, խափերան ու շարլատանը խաչով ու մինձութէնով շնուհւէին։

Դրա մէկէլ թաւուրը Էջմիածնումը կէր։

Հիմի տեհէք ձիր ամկութար աչքերով, թէ ինչ ուղուփով ասկ ինք էլի. ու գուղ ու աւազակը, վուր փառք ու պատւի տէր է ըլում, բաս էն մէկէլ փայը ինչ կուլի։

Աստուձ օխնի հաուց ասկին ու ամենակարուղ կաչառքին։

Կաշառքով ուխտի կուղին էլ կու գըրատւի, շինքն էլ։

Մաշ։

Կաշառքը վուր չէր, բաս... Է, միք ասիլ տայ, թէ ձիր ժեռեններու կուղքին պարկածներու հոքին կու սիրիք։

Էջմիածնի մոնթիրը. սրանց վրէն ինչ ասիմ...

Էն վուր ասում էին թէ՝ խանդիխան, կօսէ, վարթապետներու համա քթուցով թաւագա ին բերում, թայիր

թայիր ուտելեղէն, թայիր թայիր հոքու բարեգամուհիներ, սուտ է. իս էտ բաներ չիմ տեհի ու ինչ հարգաւուր է, էսափ վուր չը բերին ու էն էլ ըրթուցա, միր լուսաւուրուած ասկը ուրիշ ճամփով չի կանայ գթնի։

Էն վագ էր վուր մինք դրժարիլնի ու հայերի մէջ թուչող մաշինէք էինք մոգոնում. դրանք հիմի էւրոպումն ին մոդա. մինք զուգ մարթիկ ինք։

Էչմիածնի միաբանութինը թէ վուր ասկական չունէ գիդումը, բարեգամ թային ունէ. էտ բանը խիստ կարեւուր է, չունքի խանդիխան դարդուտ սրտի համա բարեգամը դիդիք ինչ է։

Համա բարեգամ էլ կայ, բարեգամ էլ. էն բարեգամը, վուր միարնի բարեգամ է, էչմիածնի չարեկամն է։

Էչմիածինը լիքն է լաւ լաւ բաղերով, բաղիրն էլ խիստ լաւ մրգերով. է՞, բաս բաղի ու բախչի մէջ բարեգամ հարգաւուր է թէ չէ։

Տօ ինչ իք խօսեցնում ինձ, Բաքւում խակի ծառ չիք գթնի, վուր գեղի համա հիմզին չանց տաք, էնդի խանը մարթագլուխ եարսուն քառսուն բարեգամիր՝ սառահէր սառամերնիր ունենայ ու էչմիածնումը կի ձին գարի չուտի. փիէ՞։

Ասկի պէյծառութինը վուրդի է. համա էլ, վուր բարեգամիր-սառամէրնների մարթիկը, մարթիկն ափրօ դառել ին էտ ասկային գուրծերին, քանց թէ իրենց օղլուշաղնիրը. համա, չունքի միր հայէվար փասկի մէջ հրամանք կայ թէ՝ կնիկը մինչկի մահ պիտի իրա մարթին հնազանդ ըլի, էսու համա էլ հնազանդ է ըլում։

Իստօրիէն ասում է, վուր միր Տրթատ թաքաւուրը, կօսէ, մէ վուխտ խուզի թաւուր դառաւ, կօսէ; չունքի միր սուփ Գրիգուր Լուսաւուրչին տասնուհինգ տարի կարեժնի բարոտա էր տւի, կօսէ, հնախ տիղը։

Հախն է։

Նահախ տիղը խակի մէ տեղն էլ չը պիտի գցւի ծառիցը ու վնւնց կուլի վուր միր սուփ Գրիգոր Լուսաւուրչին էտենց ջգրացրիլ է։

Էտ ժուգումը, իրիք թէ եարսունօխտը կուրսիտականիր. (էտ միր ժուգւայ կուրսիտականերու թուուրնիր չգիդենաք գեթադւայ, էն վուր մագիրը կըտում ին, իւփկէն էլ կարճ հաքնում, ձեռին գրքիր ին բռնում, բերնին պապիրուզ, սրտին մէ էրկու զուժին կարտինկէք, ու թրեւ ին գալիս գիշիր ցերեկ մինձ մինձ քաղաքների քուչէրումը ու սոուգենսներու օթախներումը)։ Հա, դրանք փախչելիս ին էլի ըերձէնէրու թաքաւուրի հուդիցը, չունքի թաքաւուրը ուզեցիլ է դրանց հիդ փակէի. կօսէ, (արա հիմի ասէք օքմնին տիչկան թէ՝ զուգիմ փակէի, էլ ձեռը կու քաշէ, ցիցխան զաւի կու դառնայ, ձիու ճանջի պէս էլ չի պուկվայ). հա էտ կուրսիտկէքը իրենց մինձ պապրուզա տիչինկներու հիդ, Հախմաոն, Փայանէն, Շաղակաթը, Ցխէթի Նինօն էլ հիդը. էսափ ին էլի. Տրթատը վուր լսում է, թէ սրանք էկել ին, էնչախնեեթ սիրուցը հարփիլ է. խուզավարի ուզեցիլ է հիդնիրը փակէի. (արա միր Տրթատը հիմի ըլէր, ով գիդի ինքը փախչէր միր բարիշնեքեմէն, էտ բանը վուր լսում ին կուսիրը, խիստ ին ունքիրը կիտում. (հիմի կի տիչկիրքը նեղանում ին—ունքիրը կիտում ին, իփ վուր իրենց սիլի բիլի չիս անում.) Տրթատը բղաւում է. «վա՜յ, համ թաքաւուր ըլիմ, ու համ իմ կամքը չը կատարին, կօսէ. (հէյ գիդի հա՜. ժամանակ, հիմի ունդրեկ ափիցերի համա էլ հաքի ին տալի). հրամանք է անում՝ բռնեցէք, կօսէ։ Էն տիչկիրքը չին դարուլ անում, (վունց վուր հիմի համուսաուր մարթիկը միր բարիշնէքեմէն փախչում ին.) Դէմն ին փախչում, դէնն ին փախչում ու մինձ փայը կոտորում ին, մէ քիչ փային էլ, Նինօ կուսի հիդ գալիս է Ցխէթա, էսափ վանք է շինում։

Էտ ժուգերում Տրթատը համ խուզ է դառնում, համ էլ գժւում է։ Ասինք հիմի էլ էտենց չէ։ Արա պարիկմախերնիրը չէին, մարթիկը բաս էտենց խառակ ու սիրուն սիրուն կուլէին. արա մէ բաղնիս, արա մէ մայմունի հանդր խաախաթ չունենար մարթս, բաս խուզ չէր ըլի. ան հիմի կի քըչիրը կա՞ն, մարթ խուզերեմէն։

Մա՞չ։

Հա, էն էի ասում. Տրդատը վուր էտենց է ըլում. նազիր վեզիրնիրը էրազ ին տեհնում, թէ թաքաւուրին կանայ փրգի ու դիդ տայ Խոր-Վիրապի կատրէժումը տասնուհինգ տարի աղաք գցած Գրիգոր անումով սուփը, կօսէ. էնչախնեեթ հրամանք ին տանում, Խոր-Վիրապ մարթ ու դօշուն ին դըրգում, սուփ Գրիգորին էնդանց հանում ին։ Դու մի՛ ասի, էտի միր տակի փառք ու պէյծառութինը վո՞ւնց է տալի. օրեկան մէ հաց է տալիս էլի— Աստու սակութար հրամանքով մէ խատակ հայ քրիստոնայ մարթ. Սա կի էտ հացն էլ ուտելիս չէ էլի. միր սուփ Հէրը, էն էլ տալիս է էլի Խոր-Վիրապի հորում էլած օցերին, կարիճներին, լորտուկներին ու ջօջօէքին։

Համա մեռնիմ իս Նրա սուփ զօրութէնին, տասնուհինգ տարի կարեցիլ է էնդի ապրի. էս էլ պիտիմ ասի վուր, աղաք միր սուփ Գրիգուր Լուսաւուրիչը, վուրթիք էլ է ունեցի. օղլուշաղ էլ. սրանցմէն էլ ձեռն է վիկալի, Աստըծու խաթրու. հիմի կի, տաս տասնուհինգ տարի միր վարթապետնիրը ապրում ին էչմիածնում, իրիք չուրս օթախներում, պաս ումաս չին գիդում, ժամ չին գնում, պատարագ անիլ չին սիրում, վունց մի զուրձ չին շինում ու զաւի էլ ին քաշում, «մինք զուգինք փակէի. կօսէ, թէ կու փակիք կու մեռնիք կօսէ, թէ չէ ու փարաջէն կու հանինք,» կօսէ, միթո՞մ անփակ կի քիչ օղլուշաղնիր ունին ա՛յ,

Ինչ էի ասո՞ւմ-հա. Լուսաւուրիչը հուրից դուս է գալի թէ չէ, Տրթատ թաքաւուրը վուտնիրն է ընկդնում ու էնչախնեեթ լաւանում է։ Էտդանց Լուսաւուրիչը գնում է էն մեռած կուսերի վրեններըը մէ մէ ժամ է շինում. էտ ժամերը ու նրանց գերեզմները հիմի էլ կան էչմիածնի բոլորքը. Գայանէն, Հռիփսիմէն, Շողակաթը. էնդանց էլ գալիս է վեհարանը ու քունը տանում է, տանում է քունը թէ չէ ու էրազ է տեհնում, էրազ է տեհնո՞ւմ, վուր միր Ամենակալ Աստծու Վուրթին, Միածին Քրիստուսը դիվիր է գալի սակութար հրեղէն խաչով ու չարուչով ու հրամանք է անում՝ «էսափ մէ լաւ էչմիածին շինեցէք, կօսէ»։ Վէր է կենում Լուսաւուրիչը ու էրազը ասում համ Տրդատին, համ նազիր վեզիրներուն. սրանք ուրախանում ին, կցում ին շինիլը ու ջալդով էլ վերչացնում ին։ Էն մէկէլները՝ Խաչիկ վարթապետը վուր խօսում է, հանաքնիր է անում, իրա համա է փիքր անում. իս ափրօ դըրուստ իմ ասում, հոքիս գիդենայ. ինձ աւտացէք, չիք փոշմնի, ու էն էլ աւտացէք, վուր միր էչմիածինը, վուր հազար վից հարիր ու վից տարւայ անդադա ունի, քանդւում է,

էնդդամ է հնացի. էն էլ ասացէք, վուր Վանքը հիմի պաչինկայ անիլ կուտայ միր Ալէքսանդրէ Մանթաշովը, վուր միր կուսացկութենի անթամ է, խիստ լաւ մարթ է ու Աստուծ կինք տայ, խերով էլ օրմին է։

Ամէն։

Գասպար Կալաուզեանց

## ՕՐ. ԵԿ. ՋՕԽԱՅԵԱՆՑԻՆ

Քառասունեօթին անց մօտեցար,
Բայց օրիորդ ես—դարձեալ մեծաշուք.
Արդեօք աշխարհից մի բան հասկացա՞ր,
Թէ—առաջւայ պէս, մնացիր մանուկ...

Յիշում ես, քոյրի՛կ, որ մի ժամանակ
Մարդիկ քո գեղին աշխարհ կը տային.
Եւ տեսնում ես, որ նո՛յն մարդիկ հիմակ՝
Անունդ և քեզ—ուրին Լեառային...

Ծակայն մե՛ն-մենակ երգիչը—Թշուառ
Իր սուրբ ուխտի մէջ մնաց անդադար,
Եւ շա՜տ գոհ կըլնէր, թէ այդ գալկահար—
Դէմքից եդեմից, քաղէր գէթ մի վարդ...

Լիլիպուտի

## ՅԱԿՕՆ ՏԱՐԱ՞Ւ

Գաղէթանի աղա ջան.

Ցակօյի թարաֆէն Աստծով մխիթարիս. Հրամանքիդ դուլլուղատար, «Խաթաբալա» ծախող մշեցի Ցակօն՝ բինդանքիրա գալը էդաւ։ Շաբաթմ յառաջ սէզնթուն ասիր էի, թէ պիտի փախնի, կանչեցի քովս, հարց ու փորձ էրի. հարիֆը չէրդըռաւ. խաչը կոթով կուլ ուեց թէ. «սուտ կը սէն կը, աղա ջան, դուշմընութեն կենին կը, էրթամ էրկիր, ինչ էնիմ. ես մէ ֆուխարա տկլոր մարդ իմ. յոնի յարտ չունիմ, չութ ու չըպուղ չունիմ, յուրիշ գատում ու գանեաթ լէ չունիմ. էլ յո՞րի էրկիր էրթամ. էլ յո՞րի թորկիմ էստեխի քեար ու դատում, էրթամ էրկիր բատտալի օլօրտիմ ու անօթի գկըրտամ։ Հանդէ իդա տես, Աստուծ բարաքեաթ տայ, Խաթաբալա, Մշակ, Հորիզօն, Սուրհանդակ, Ախուրեան ու գրքիր օրացուցներ կը ծախեմ ու աղավարի կապրիմ. էլ յո՞րի թորկիմ էս թալուր դադում, էրթամ էրկիր»։—Շատ ապէս կակուղ բարձ գրեց գլուխս տակը, ինծի արխէյին ցկեց ու փախաւ։ Տէյմօր դարւամիշ էղայ, Ցակօն թուաւ։ Բիթուն գաղէթները ծախիր, նիսիէքը թօփ է էրիր խարջից է չինիր ու փախիր։ Հիմի աղա ջան, ես բախշէք. ես ինձի գավերնոտ աւէք. ճամբուս մասրաֆը աւէք, չորս ամսւայ էլ խարջից աւէք, էրթամ Մուշ, թէ գտայ հարիֆին, առնիմ փարաները գամ, թէ չգտայ, դուք սաղ լըլլիք։ Ջարար չունի, ասիկ ալ գրէ նիսիի դաֆտարի մէջը։

Գալայչի Մարգար

## ՄԵՐ ԱՐԻԵՍՏԱԳԷՏՆԵՐԸ



Բարիտոն ԲԷԳԼԱՐ ԱՄԻՐՋԱՆ
(Արտիստ կայսերական Թատրոնների)

## ԽՐԹՈՒՆԻ-ԲՍԿԱՆ ՑՈՒԻԵՐ

Закавказіе-ի խմբագիրները չգիտենք, որ սուտ պրծիւրից, բայց իրր թէ լսել են, որ Մանթաշեւը 20,000 ռուբլի փող է նուիրաբերել Թիֆլիսի ստրիկաններին ի յիշատակ իր ամուսնու։

Այդ պրատակցիոն լուրը հերքելու, թէև նորից Закавказіе-ն ուզեց հաստատելի իր սուտը։

Ներկայիս, ինչպէս մեզ հաղորդում են, Закавказіе-ի խմբագրութեան մօտիկ և բարեկամ անձնաւորութիւնները, իշխան Ամիրաջիբին և ընկ. խմանալով 20,000 ռուբլու պատմութիւնը, ինչքն են ներկայացրել Թիֆլիսի ստրիկանութեան՝ իրենց իշխան խմբագրին ու մօտիկ անդամներին ստրիկանութեան շարքերը ընդունելու համար, որպէսզի համաձայն նոյն այդ կտակի, մի մասն էլ իրենց բաժին ընկնէ 20000 ռուբլի Մանթաշեւանի փողից։

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Թամոյեան եկեղեցու շինութիւնը խիստ արագ է առաջ գնում, որը անկասկած կարող է վնասել եկեղեցու եկամուտներին, ատի երեցփոխ Վարդապետեանը, շինարարական մասի հետ միասին, հրաժարւել են իրենց պաշտօնավարութիւնից։

Ծխական ժողովը սակայն նշանակել է նրանց ռոճիկ, աւելի երկար ու քէֆ ուզած ժամանակը եկեղեցու շինութիւնը վերջացնելու համար։

Թէ ինչպէս անպէտք և ուսեալ մի հիմնարկութիւն է հայոց եկեղեցին—այդ երևում է նրանից, որ հայոց եկեղեցու ծխական ժողովներին, հաւաքւում են նրանք, որոնք իրենց կարմիր և արմատական են համարւում և այդ գիտէք ինչու համար, որովհետև ազատ երեցփոխներից, ազէտ ոէրաէրներից, ոչ միայն ոչ պակաս, այլև սմենայն թափով աւելի ուտում են իրենք եկեղեցական հասոյթները։

Երկնեց լեռը մեծ ուժգին
Եւ ծնաւ մուկ շատ ճչչին։

Տարիներից հետէ շարունակ խօսւում, կռւում և ուշաւում էին, որ էջմիածնի կառավարիչները վերջ ի վերջոյ մի ուսումնական խորհուրդ կը կազմեն, որոնք ոչ միայն հեղինակութիւն և արժանիք կունենային մեր դպրոցական կեանքում, այլև...... մի խօսքով, շատ բան կարելի էր անել։

Այժմ պատուի ունինք յայտնելու ատասխօս հայ հասարակութեան, որ կազմած ուսումնական խորհուրդը ոչ միայն անձեռնահաս է հեղինակաւոր լինելու, այլև խորհրդի անդամներն իսկ, օտարական պիտի համարեն իրենց ուսումնական խորհրդի անդամ լինելը։

Գեստական Դումայի անդամ Ց. Սաղաթելեանը քաղաքական չըքմաններում խօսել և ասել է, որ ինքը մասպրութիւն ունի խօսելու Դումայում, իրա ընտրողների ապիկարութեան համար, որ իրեն առիթել են անդամ ընտրելու, Գեներբուրգում անանդրն ձմեռը անցնելու ու Տաճկեւան պահանջում ննջելու։

Հայ լեզուախտական (?) կուսակցութիւնները վերջերս ամեն ջանք գործ են դնում, երիտասարդ թուրքերի հետ միասին ուշընչացնելու Կ. Պօլսի Ազգային Պատրիարքարանի, հետեւապէս և ազգային ժողովի քաղաքացիական և ամոնում իրաւունքները, որովհետև, ինչպէս ասում են, չի կարելի սահմանադրական պետութեան մէջ՝ սահմանադրական և ամոնում մի այլ մարմին էլ գոյութիւն ունենալ, թէև այդ մարմինը լոկ բարոյական առաջնորդութիւններ կարող է անել Բարձր Դրան։

Ակնյայտին և այլք իրենց ազնիվ գոյութիւնը պահպանելու համար, պատրաստ են հայոց ազգն էլ ոտի տակ տալու, որովհետև ինչպէս լսում ենք, սահմանադրական կայսրութեան մէջ իրաւունք ունին յեղափոխական մարմիններ գոյութիւն ունենալ, իսկ հինգ հարիւր տարւայ պատրիարքութիւնները ոչ։

## ՄԵՐ ԱՐԻԵՍՏԱԳԷՏՆԵՐԸ




Ջութակահար ԴԱՒԻԹ ԴԱՒԻԹԵԱՆ

ՀՆԱՐԱԳԷՏ

—Ուրեմն երկու օր քեզ նստեցրին բանտում.

—Ոնց չէ՜, բոլորին էլ խաբեցի, ամբողջ ժամանակ ես կանգնած մնացի. չնստեցի։

## ԳՈՒՇԵՐ ԵՐԵՒԱՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

Կաթողիկոսական օծման պատճառով էջմիածին գնացած լինելով, այնտեղից էլ դէպի այնպէս բերեց, որ մի օրով անցայ Երեւան և որովհետեւ վաճառականական ծանօթ շրջանի մէջ ընկայ, ուստի լսածներս մեծ մասամբ վերաբերում էին, հէնց այդ շրջանին պատկանող մարդկանց։

Որպես զի ընթերցողներն ինձ չը մեղադրեն անհասատական հարցերով նրանց գրագեցնելուս համար կասեմ, որ այդ յատկութիւններով օժտուած են և շատերը։

Մարգար աղա Դագ-Դագեանի մտերմական զրոյցը, իր գործակատարների հետ առանձին առանձին.

Գործակատար Մուկուչին.—Մուկուչ ջան, դու հօ գիտես, թէ ես քեզ ինչքա՜ն եմ սիրում. որդի ես, դու ես, կառավարիչ ես դու՝ ես, ժառանգ ու կատակակատար ես՝ դու ես։ Այս ամբողջ խանութը քոնը չէ, էլ ձեռն է. Ոնց ուզում ես կարգադրիր. բոլորի մեծը դու ես. հաշւապահ Վաղարշակն ինչ է, որ քո առաջ համարձակւի խօսի, նրա շուն հէրն անիծած...

Հաշւապահ Վաղարշակին.—Ա՛յ որդի, դու չե՞ս իմանում որ այս ամբողջ խանութիս տէր ու տիրականը դու ես. առանց քեզ մենք ինչ ենք. իմ երկու աչքիս պէս քեզ սիրում եմ. այստեղ մենակ դու ես խաղեալինը էլ ուրիշ ոչ ոք, իմանո՞ւմ ես. Մուկուչի թաշխուստին մի նայիլ, նա ինչ է որ, նրա շուն հէրն անիծած...

Կառավարիչ Գարասիմին.—Գարասիմ ջան. միթէ ես չեմ հասկանում, որ իմ այս ամբողջ գործիս կեանքն ու հոգին դու ես. առանց քեզ՝ մեր խանութն էլ է կորած, ես էլ և ամենքն էլ. ինչ ուզում ես արա, տուր, առ, թէկուզ բոլորը լակ ձու. արա և պատերակը տուր. ով կը համարձակւի քո առաջ խօսի. ես ու կինս քեզ եաղ մարդ չենք համարում, այլ մեր հարազատ որդին, հրամայիր այս բոլոր ծառայողներին ինչ որ ուզում ես և ով որ կը համարձակւի հակառակւիլ քեզ, առանց նոյնիսկ ինձ յայտնելու, պոչիցը բռնիր ու դուրս ձգիր. էդ կանտորշչիկ Ռուբէնին նայիր, դա մի քիչ ինձ ուրիշ տեսակ է երեւում, փողերի հաշւին խիստ հետեւիր, դրա վրայ ես կասկածում եմ. դրա շուն հէրն անիծած...

Գանձապահ Ռուբէնին.—Իմ այս հարիւր հազարների գործի մէջ, ես միայն քեզ եմ վստահում և քո յուսով եմ գործ անում. եթէ, Ռուբէն ջան, մի րոպէ դու առդ այս խանութից քաշւելու լինես, ես իսկոյն բոլորը կը վերջացնեմ, որովհետեւ հիմա էլ հաւատարմութիւն չը կայ։ Թէեւ կառավարիչ եմ նշանակել Գարասիմին, բայց սիրտս կախ է, նրա շարժւածքն ինձ դուր չի գալիս և ես մտադիր եմ այս յունւարից

## ՓԵԼԻԷՏՕՆ

### ՆՇՈՒԱԿՆԵՐ ՎԵՐԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻՑ

ՀԱՒԱՏԱՐԻՄ ՀԱՐԱԶԱՏ ԱՐՔԻ ՍԱՏԱՆԱ ՍԱԹԱՑԷԼԻՑ.

ՆՈՐԻՆ ԽԱԹԱՐԱԼԱՑԵԱԿԱՆ ՃԱՃԱՆՉԱՓԱՅԼՈՒԹԵԱՆ

բիւր արժանիք Գասպար աղա Կալատոզովեանին հասանի ի քաղաքն Տփխիս սեփական ձեռն ամէն։

Հեղահամբոյր գեհեւցումն փառն տնցից և գարձից Վերին Երուսաղեմի։

Ծաճանչափայլ տէր. ահա երկրորդ տարին է, որ Վերին և Ներքին Երուսաղէմներից, յաւիտենական բաւարաններից, Արքահամի գոգից, գժոխքի սանդարամետից և դրախտի արքայութեան օթեաններից, ոչ մի տեղեկութիւն, ոչ մի համբաւ չունիք. այդ բանը հաւանականօրէն առաջ է եկել նրանից, որ ձեր այստեղի նախկին լիազոր դեսպան, պարոն գրաֆ Լիւցիֆէր Մէֆիստոֆէլը ժամանակաւորապէս այստեղից հեռացւած է։ Նա՝ Գրաֆ Մէֆիստոֆէլը իր քաղաքական, կրօնական, գեղագիտական և գեղարւեստաբրական համոզմունքների պատճառով, ահա երկու տարի և երկու ամիս է, ինչ ընդհանուր դժոխային և դրախտային գեներալ նահանգապետի կողմից վտարւած է։

Փորձ էր արել, մէկ թէ երկու անգամ, առանց անցագրի աքսորավայրից և այն էլ ծածուկ յետ դառնալ, բայց այդ նրան չէր աջողւել, որովհետեւ այստեղ անչափ մեծ թւով դաղտնի և ծպտեալ ոստիկաններ են եկել վերջերս, ձեր մեզանից հողագնդից, որ ուղղակի անտանելի է. նրանք մտանել են կոմսին և կրկին հրաման արձակւեց բռնել և աքսորավայրը ուղարկել նրան—էտապով։

Կոմս Մէֆիստոֆէլի քաղաքական կրօնական, գեղագիտական և գրական «դայֆաջեական բարեկամները, ընկերները այդ առթիւ միջնորդեցին անգամ Թրիմեան կաթողիկոսին, որ միջնորդ հանդիսանայ նրան աքսորից վերադարձնելու, բայց հայոց Հայրիկը պատասխանեց թէ՝ ես, որպէս ամենայն հայոց կաթողիկոս, ինձ այնչափ չեմ ստորացնի, որ կոմսի համար բան խնդրեմ որեւէ մէկից, որպէսզի ի դէպս մերժման՝ անյարմար դրութեան մէջ չը ընկնեմ». կոմսը նոյնպէս սարսափելի դրութեան մէջ է, ամեն օր սուրճ խմելու համար, հինգ հազար առնաչափ սանդուխներով վեր և վար է բարձրանում, ցածրանում.

Մէֆիստոֆէլը պահանջել է քննութիւն նշանակել, իր չը գործած յանցանքների համար պատժւելու առթիւ։ Այդ պատճառաւ, այստեղի կրօնական, կառավարչական, քաղաքական և անգործական շրջաններում, այդ գործին սպասում են խիստ հետեւողականութեամբ։

Թեզճ կոմսը այժմս վատ դրութեան մէջ է, եթէ մի քանի միլիոն ուղարկէք նրան որպէս «պապիրոսի և բռնօթու փող» չէք փոշմանի, նա այժմս գտնւում է Հալլէյ մոլորակի վրայ, գեներալ Տրէպովի հետ միասին, որ այնտեղ նշանակւած է խուզարկու ոստիկան և աքսորեալների հոգեհան։

Քանի որ ձեր թղթակից դեսպանը, այս պարագաների մէջն է գտնւում, քանի որ այստեղի և հողագնդի մէջ հաղորդակցութեան համար, ոչ մի յարմարութիւն և ոչ էլ մարդ ունէք, ուստի առաջարկելով ձեզ իմ ծառայութիւնը, խնդրում եմ իմ յօդւածներին տեղ տաք «Խաթարալայում» և «Խաթարալայի» համարներն էլ ուղարկել ամեն շաբաթւայ 140,000 ական օրինակ, հաստավաճառի համար. դուք մի վախենաք. որ հաստավաճառից գոյացած փողը երբեւիցէ

## ՀԻՆԳ ԲՈՒԲԼԻԱՆՈՑԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

*Նւէր Բագւի գործարանատէրերին.*

Երկար չպիտի ձանձրացնեմ ձեզ իմ պատմութեամբ, որովհետև տառնց այն էլ քնել եմ ուզում, հանգստանալ։ ճ, Աստուած իմ, ինչքան եմ տանջւել, և ինչեր տեսել։

Սկսում եմ նրանից, որ ես գործարանատիրոջ գրպանի մշտական զարդն էի կազմում, մի զարդ, որից նա երբէք չէր ուզում բաժանւել։

Բայց պատահեց այնպէս, որ մի օր ինձ զատ կողմ ձեռներում…

Իմ նոր տէրը նախկինի նման չէր, նա ինձ մի րոպէ անգամ հանգիստ չէր տալիս, այլ շարունակ աղշած աչքերով նայում էր իմ կապուտակ աչքերին. ախ, ինչ սակալի էին այդ աչքերը, ես նրանց մէջ կարդում էի տանջանք, վիշտ, անկուսթին, հեղնանք և վերջապէս մաղթանում…

Տէր Աստուած, ինչպէս զգում էի ես նրանից. լաթի կտորներով փաթաթւած նրա մարմնից եթէ չեմ սխալւում նաւթի հոտի պէս մի բան էր բուրում, որից գարշանքս էր գալիս…

Նա մի անգամ նոյն ինկ իր կոպիտ մատներով այնպէս ճխլեց ինձ, որ քիչ մնաց ոսկրներս կոտրատւէին, և այդ այսպէս պատահեց.

Մի շարաթ երեկոյ նա իր քայլերը ուղղեց ինձ անծանօթ մի փողոց։ Դեռ դռնից դուրս չեկած ես լսեցի հառաչանքների և լացի ձայներ։

—Միշա, ի սէր Աստուծոյ, ինայիր զաւակներիդ, եթէ չես խնայում կնոջդ, էլ մի գնա այնտեղ, մի գնա…

—Հայրիկ, հայրիկ, մենք քաղցած ենք…

Բայց իմ տէրը չլսեց նրանց լաց ու կոծը և ինձ ամուր բռնած գրպանում, անցաւ ծուռ ու մուռ փողոցներով ու կանգնեց մի դռան առաջ, որտեղից օղիի զզւելի հոտ էր գալիս։

—Մաքր Միշկա, բանւոր ընկերներդ այստեղ են։ Ես այդ ժամանակ միայն հասկացայ, որ իմ տէրը բանւոր էր եղել… Փառք, ես ատում եմ բանւորներին, ես խորշում եմ նրանցից…

Քիչ յետոյ ես լսեցի ոսկրներիս ճարճատիւնը և ուշաթափ ընկայ սեղանի վրայ, իսկ թէ յետոյ ինչ պատահեց, չգիտեմ. միայն երբ զգաստացայ, ես ինձ զատայ օղեվաճառի գրպանում, որտեղ հանդիպեցի որինաց երեքանոցին և պարոն տասնանոցին, որոնք ինձ յայտնեցին, որ իրենք էլ բանւորների գրպանից են մտել այդտեղ։

Բայց ես երկար չմնացի իմ նոր բնակարանում, որովհետև իմ նոր տէրը հարկաւոր համարեց ինձ մի աւելի պատուաւոր տեղ ուղարկել։ Հէնց այդ օրն իսկ, ես մտայ օղեվաճառի տանտիրոջ մնդուկը, որտեղ պէտք է խոստովանել բաւական տաք էր և հանգիստ, եթէ միայն տիրոջս շառլատան որդին, ինձ մի գիշեր չգողանար սնդուկից…

Ես այնպէս էի նիհարել այդ մի քանի օրւայ մէջ, այնպէս էի տրորւել, որ գործարանատիրոջը յիշելիս, չէի կարողանում արցունքներս զսպել…

Նրա մօտ ես այսպէս չէի ապրում, նա թանկագին բրդէ կտորից պայուսակ ունէր, որի գրպանում այնպէս տաք, և այնպէս լաւ էի զգում ինձ. բայց այս շառլատանի գրպանում ես մրսել էի և հարբուխ առաջ ցել… Եւ Աստուած իմ, ինչ զզւելի գեղերի հոտ էի զգում…

—Քիչ էլ գիջեցէք.

—Վերջին խօսքս է, հինգ բուբլի, ոչ աւել և ոչ պակաս. չհաշւած հիւրանոցի և գարեջրի արժէքը…

Խօսքը իմ մասին էր. փառք Աստծոյ, շառլատանից բաժանւելու նշաններ էին երևում. բայց երբ պիտի գայ այդ երջանիկ րոպէն, և ով է իմ ապագայ տէրը…

Այդ հարցերով էի զբաղւած, երբ յանկարծ չորս կողմս խաւարեց և ես յաճախ համբոյրների ձայն էի լսում…

Այս ինչ է նշանակում, հարցնում էի ինքս ինձ, չէ որ քիչ առաջ այնպէս լոյս էր։ Բայց ամէն բան պարզւեց ինձ համար, երբ մի զոյգ կանացի նուրբ ձեռներ բռնեցին իմ իրանից և տեղաւորեցին մի փոքրիկ սնտուկում, յատուկ մեզ համար պատրաստւած։

Իմ քնքոյշ տիրուհին սակայն երկար չը պահեց ինձ և կէս ժամից յետոյ, մենք միասին մտանք մօդային գլխարկներ վաճառողի խանութը։

Եւ այսպէս մի քանի խանութպանների գրպանում թափառելուց յետոյ, մի գեղեցիկ օր, ես ինձ զատայ մի ծանօթ գրպանում…

Կարող էք երևակայել, նա իմ սիրելի գործարանատէրն էր, որի բրթէ պայուսակի գրպանում, ես ինձ միշտ հանգիստ եմ զգացել։

Ա՜խ, Աստուած իմ, ինչ լաւ է այստեղ…

Սել-Ֆիդ

### ՆՈՐ ՍՏԱՑՒԱԾ ԳՐՔԵՐ

ՆՈՐ-ԴԻՊՐՈՑ ամսագիր օգոստոս-սեպտեմբերի միացեալ համար. 1909.

—

«ԳՈՒՏՏԵՄԲԵՐԳ» գրախանութի հայերէն գրքերի ցուցակը։

—

Արիստոմ Ցովհաննիսեան
ՓՈԹՈՐԿԻՑ ԱՌԱՋ
Վէպ. գ. 1 ր. հրատ. «Գուտտեմբերգի»

—

«ԱՂԲԻՒՐ» ամսագրի սեպտ. համարը։

## ՓՕՍՏ-ԱՐԿՂ

Մանգլիս. Վ.-ին.—Ձիմ ասում, հանաք կուլիք անում, հիմի ինչ հանաքի ժամ է ու էն էլ իբեր մանէթանոց հանաքի։

Երեւան. Ա. Մէ. Բէյին.—Պէտք է ստորագրէք Ա. Բ. Գ. Դ.-ին, դուք հայերէն այբուբէնը գիտէք։ Վարժապետ հօ չէք, որ չգիտենաք։

Ղարս. Ղալայչի Մարգարին.—Վատ օրերի տասը էկանք, էլ հալ չմնաց վրաններուս։

Նկատերինօդար. Պօնժուրի Մելքոնին.—Պէտք է գրանց «դիրամալա» նկարել, ուրիշ ճար չկայ, թող իմանան, որ հանարը մաախադրութիւն չէ, մեր կուսակցութիւնը էն մէկէլներից խօ չէ. մենք լաւն էլ գիտենք. վատն էլ։ Ձեզանում կարտօփիլի փութը ինչ է ծախւում։

Փօլիս. Թօլայեանին.—Աչքներդ հանում են, բա դուք կարծում էք թէ…… ազգի փրթիշները դրանք են։ Տեսաք։ Վերջը դու մարդ կը դառնաս։

Ծխախոտի գործարանից՝

Ն. Ի.
ԲՈԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴ.
Ի վաճառ է հանւած
ՆՈՐ ՊԱՊԻՐՈՍ

«ТОВАРИЩЪ» 20 հատը 5 կոպ. (միջակ ձեւ)
«ДРУЖБА» 20 հատը 5 կոպ. (բարակ ձեւ)

Դիտողութիւն.
Առեւտրական տունը վճռեց ի վաճառ հանել այդ պապիրոսները ամենահասարակ էտիկետներով, որպէսզի այդ կերպով հնարաւորութիւն լինի պ. պ. ծխողներին միշտ էլ լաւ յատկութեան և աժոռժելի համով ծխախոտ ընձեռել։

Ամեն տեղ էլ կարելի է պահանջել
Մեծ քանակութեամբ առած պապիրոսները կը կատարւին բատ չափու հնարաւորութեան։

10—7



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

„ՊՐՕՎՕԴՆԻԿ"

ԱՐՏՕՆԻԱԾ

Ամենալաւը Աշխարհում



ԱՆՊԱՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆՕՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ամենաառաջին և ամենաբարձր ամրութեան, լաւ յատկութեան, չքեղ ֆասօնների և ամենալաւ գործածւող նիւթերից։

ԱՐՏՕՆԻԱԾ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ

ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

ՊՐՕՎՕԴՆԻԿ



ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՄԻՒՆԽ ԵՒ ՎԷՅՍ

1888

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒՈՒՄ

Հեռախօս № 258 Հեռախօս № 258




ՊԱՐԻԶԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՊԱՏՐԱՍՏ ՀԱԳՈՒՍՏԻ

„ԵՂԲ. ՍԱՓԱՐԵԱՆՑ ԵՒ ՏԷՐ-ՍԱՀԱԿՈՎ"

ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԵԿՏ

ԲԱԺԱՆՄՈՒՆՔ ԲԱԳՈՒՈՒՄ

0—1

Սեզոնի համար ստացուած է մեծ քանակութեամբ տղամարդկանց, կանանց և երեխաների պատրաստ հագուստեղէն, զինուորական և քաղաքացիական պաշտօնեաների տարազներ, արական և իգական դպրոցների համազգեստ։

Պատուէրները կատարւում են փորձուած վարպետների հսկողութեամբ շուտ և ճշտութեամբ։

МАГАЗИНЪ

**Композиція**

Тифлисъ Пушкинскій пассажъ № 8.



Громадная экономія

шведскаго композиціон. бѣля.

→Носится не менѣе двухъ лѣтъ←

Постоянный большой выборъ свѣжаго товара

**Воротниковъ, манишекъ и манжетъ.**

Единственный представитель для Тифлиса и ихъ окрестностей

по фабричнымъ цѣнамъ

передѣлка въ любой фасонъ безплатно

30—16 М. А. КАЛТАГЯНЦА



ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Գրական, քաղաքական, հասարակական եւ առեւտրա-արդիւնաբերական ան կուսակցական օրաթերթի

Առայժմ լոյս է տեսնում երկուշաբթի օրերը։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՄԻՆՉԵՒ ՅՈՒՆ. 1Ր.։

Հասցէն՝ Тифлисъ Редакція газеты «Сурандакъ»



Գաւառական քաղաքներում, աւաններում և ընթերցասէր գիւղերում, հարկաւոր են լրագրավաճառ գործակալներ, որոնք յանձն առնեն «ԽԱԹԱԲԱԼԱՆ» տարածել, իրենց շրջաններում»։

Պայմանների մասին դիմել Թիֆլիզ, խմբագրութիւն «Խաթաբալայի»։



«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ»

Խմբագրութիւնն ու գրասենեակը

# ՏԵՂԱՓՈԽՒԵԼ Է

Սերգէևսկայեա փող. № 1. տուն Եղբ. Միրզոյեանների. առանձնատուն Ն. կաճկաճեանի բնակարանի վերևի յարկ.



Ս. և Ա. ՂՈՒԿԱՍԵԱՆՆԵՐԻ



# ՁԿՆԱՎԱՃԱՌԻ ՄԱԳԱԶԻՆԸ

(Պուշկինեան փող. տուն Սանդուկեանի, վրաց սեմինարիայի դիմաց)
Ամէն օր ստացւում է սեփական ձկնարդիւնաբերանից թարմ ձուկ
ՍԵՒՐՈՒԳԱ, ՕՍԷՏՐԻՆ, ԹԱՐԹ
Ունինք մեծ քանակութեամբ թարթի դօշ. Դոնի և տեղական
բալիկ, ճիպա, ցալձվալա, եանի և այլ
ԼԸՒՏԻՐ ՏԵՍԱԿԻ ՁԿՆԿԻԹ (жидка) ԵՒ ԽԱՒԱՐ
Կովկասեան և արտասահմանեան ձկնային կանսերւներ
Գները ամենաչափաւոր 20—7





ԷՅՆԵՄ
ԼԱՒԱԳՈՅՆ
ՇՕԿՕԼԱԴ

13—5



ՆՈՐՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍ!!

Պուշկինեան պասաժ № 4—6

ՄԻԱԿ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Յատուկ դերձակային պիտոյքների.—Տղամարդկանց և կանացի զանազան կոճակների, մետաքսի և բրդի շերիտների, բամբակի և մետաքսի զանազանագոյն թելերի. ձև անելու չափեր, կաւիճ, մեքենայի իւղ, զանազան սուտաշներ, փունջեր (փիւսկիւլ) դայթաններ։ Այդտեղ էլ ընդունւում են պատւէրներ զանազան կտորներից շինւող կոճակների, նոյնպէս ամեն տեսակ վայելչաձև ապրանքների. մշտապէս ստացւում են սեզոնի նորութիւններ։ Խնդրում եմ գնորդներին առանց ուշադրութեան չթողնել վաճառատունս և անձամբ համոզւել խանութիս մէջ։

Ապրանքների գները նշանակւած են ամենաէժան։

10—2 Մ. Գ. ԲԱԽՉԻՆԵԱՆՑ



# Ն. Ի. ԲՕԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴ.

ԳՈՐԾԱՐԱՆԸ

ԾԽԱԽՈՏԻ ԲՈԼՈՐ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՐԱՅ

50% ԵՒ ԱՒԵԼԻ 50%

ԸՆԿՑԻՋԻ ԸՒԽԵԼՕՆԸԼՈՒ

և ծխախոտի թանգանալու պատճառով

Իրեն նպատակն է դրել՝ պահել պահպանել առաջւայ պէս արտադրւող պապիրոսների բարձր յատկութիւնը և առանձին ուշադրութիւն դարձնել

**Симпатія № 8** 10 հ. 6 կ. **Народныя Экономія** 10 հ. 4 կ.

Գների այսպիսի աննշան բարձրացումով գործարանը հնարաւորութիւն ունի մշտապէս պահպանել արտադրւող պապիրոսների բարձր յատկութիւնն ու արժանաւորութիւնը, մինչոյն ժամանակ աշխատելով ապագայում լաւացնել նրանց, որպէսզի արդարացնի և ամրացնի այն «ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆԸ», որով մեր ֆիրմայի պապիրոսները վայելում էին 50 տարւայ ընթացքում պ. պ. սպառողների կողմից։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Ներկայ յայտարարութիւնով (ոչ թէ ըեկլամ)

**Ն. Ի. ԲՕԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴ.** գործարանը

ցանկանում է յարգելի հասարակութեան իրազեկ պահել գործերի ներկայ դրութեան վերաբերմամբ։ Ակցիզ. սբոր. մասին կանոնագրքի 940 յօդւածի հիման վրայ վերոյիշեալ պապիրոսները արգելւում են ծախել էտիկէտների վրայ նշանակած գներից թանգ։

10—7


Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

Электропечатная С. М. Лосаберидзе Московская ул. № 5.

## ԴՈՒՄԱՅԻ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՒ



—Սա աւելի ուղիղ է ցոյց տալիս դրութիւնը, քան թէ պոլիտիկան ու պոլիտիկոսը։

## ՈՒՍԱՆՈՂ—ՈՒՍԱՆՈՂՈՒՀԻՆԵՐ



—Հ՞ը բարեւ ձեզ, դուք կրկին եկաք մայրաքաղաքը։
—Անպայման, չէինք կարող ձեզ մոռանալ։
—Դուք մի պրոֆեսորի մօտ էք գնում։
—...Ինչպե՞ս ձեզ մօտ, որովհետեւ աւելի լաւ է հէնց ենք հասկանում, ձեզնից պրոֆեսորներին։




Երբ քնած է հայը՝ գրիչը չէ, որ պիտ նրան զարթեցնէ, հարկաւոր է դագանակ և այն էլ երկաթէ, որպէսզի յաւիտենապէս չը թմրէ.




Կանայք նորաձեւ գլխարկներ են մտցրել մի այնպիսի մեծութեամբ եւ շրջագծով, որ փողոցներում ահագին տեղ են բռնում. գլխարկի վերեւը, լաւ եղանակին կարելի է տեղաւորել մի ամբողջ ընտանիք՝ հայր, զաւակներ, կատու, շուն, հաւ եւ այլն. իսկ անձրեւային եղանակներին էլ՝ գլխարկը կարող է յարմար վրանի, կամ մեծ զոնտիկի տեղ գործ ածել։ Առաջարկում ենք բնակարան չունեցողներին եւ բաց երկնքի տակ մնացածներին օգտուել այդ գլխարկներով։